

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ՄՏԱՀՂԱՑՈՒՄԸ

Անցած տարի ընթերցողի սեղանին է դրվել նոր, շքեղ և ճաշակով հրատարակված մի գիրք, որն անմիջական առնչություն ունի «Բրյուսովը և Հայաստանը» թեմայի հետ: Գիրքը վերնագրված է «Армянская историческая проза и поэзия (V- XVIII в.в.). Антология по проекту Валерия Брюсова»¹. Այն ստեղծվել է Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում և լույս է տեսել «Ամտարես» հրատարակչությունում: Այն կազմել և խմբագրել է դոցենտ Նաիրա Սեյրանյանը, գիտական խորհրդատուն է պրոֆեսոր Սուրեն Զոլյանը:

Ի՞նչ նախագիծ է այդ, որ գրեթե մեկ դար չի իրականացվել և նոր է միայն կյանքի կոչվել:

Ինչպես ռուս, այնպես էլ հայ ընթերցողի կողմից մեծ խանդավառությամբ ընդունված «Поэзия Армении» անթոլոգիայի (Մոսկվա, 1916) լույս տեսնելուց հետո Վ.Բրյուսովը դիմեց Մոսկվայի Հայկական կոմիտեին՝ առաջարկելով հրատարակել մի նոր ժողովածու՝ «նվիրված Հայաստանին, այսինքն՝ հայ ժողովրդի մշակութային կյանքին նրա գոյության ողջ ընթացքում»: Ըստ բանաստեղծի՝ այդ ժողովածուն «պետք է ուղղված լինի... ռուս և մասամբ հայ ընթերցողների ամենալայն շրջաններին»: Այդ մասին վկայող Բրյուսովի 1917 թ. փետրվարի 15-ի գրության տեքստը, որն առաջին անգամ հրապարակել էր Գ. Թաթոսյանը 1959 թ., ամբողջությամբ բերվում է նոր անթոլոգիայում, որպեսզի այսօրվա ընթերցողը հստակ պատկերացնի, թե ինչպիսին էին բանաստեղծի մտահղացումներն ու ծրագրերը: Բրյուսովի համոզմամբ՝ «գրականության օգնությամբ ռուս հասարակությանը Հայաստանի և հայ ժողովրդի հետ ծանոթացնելու» հնարավորությունները ամենևին չեն սպառված: Նա առաջարկում էր կազմել մի ժողովածու-քրեստոմատիա, որում բազմադարյա հայոց պատմությունը կներկայացվեր «կենդանի նկարագրություններով՝ վերցված տարբեր ժամանակների հայ գրողների երկերից կամ արդի փաստաթղթերի»:

1 Армянская историческая проза и поэзия (V- XVIII в.в.). Антология по проекту Валерия Брюсова. Ереван, «Антарес», 2009, 335с.

թերից»։ Ընդ որում, բանաստեղծի կարծիքով, ներկայացվող դրվագները պետք է քավարարեն երկու հիմնական պահանջների. «լինեն բնորոշ իրենց ժամանակաշրջանի համար և լինեն բարձրարվեստ»։

Բրյուսովը շատ մեծ նշանակություն էր տալիս ընտրված նյութերի գեղարվեստական արժեքին. պատահական չէ, որ նա 5-րդ դարի պատմիչ Եղիշեի գրքից առանձնացնում է խորաթափանց քնարականությամբ և պատկերավորությամբ տողգորված «Տիկնայք փափկասունք հայոց աշխարհի» հայտնի դրվագը։ Բացի պատմական երկերից, բանաստեղծը մտադիր էր ապագա ժողովածուում ընդգրկել նաև հոգևոր պոեզիայի մոուլներ՝ շարականներ, ինչպես նաև պատմական ժողովրդական երգեր, դրվագներ և պատառիկներ աստվածաբանական, փիլիսոփայական, գրական ստեղծագործություններից, որոնց մեջ իր վառ ու կենդանի արտացոլումն էր գտել այս կամ այն դարաշրջանը, այս կամ այն իրադարձությունը։

Վ.Բրյուսովի գրությունը Մոսկվայի Հայկական կոմիտեին հավաստում է, թե ինչպիսի պատասխանատվությամբ էր վերաբերվում ռուս բանաստեղծը ապագա ժողովածուի խմբագրի իր աշխատանքին։ «Ես իմ պարտքը կհամարեի, - գրում էր նա, - ձեռնարկել հայոց հին լեզվի՝ գրաբարի ուսումնասիրությունը, որպեսզի հնարավորություն ունենայի վերահսկելու թարգմանությունները»։ Այնուհետև, խորհելով այն մասին, թե ինչպես են կատարվելու թարգմանությունները նոր հրատարակության համար, Բրյուսովը մի շատ կարևոր միտք է արտահայտում. «Բոլոր թարգմանությունները պետք է ամենայն ուշադրությամբ խմբագրվեն, որպեսզի ռուսերեն տեքստը անթերի լինի լեզվի տեսանկյունից, բարձրարվեստ՝ ոճի առումով, և ընթերցվի առանց որևէ դժվարության» (Ընդգծումը մերն է՝ Մ.Ջ.)։

Մանրամասնորեն ներկայացնելով իր պատկերացումները ոչ միայն ապագա ժողովածուի բովանդակության վերաբերյալ (բանաստեղծը նշում է ըստ պատմական շրջանների կոնկրետ հայ հեղինակների և նրանց երկերը), այլև նրա գիտական ապարատի, գեղարվեստական ձևավորման մասին (նա համարում էր, որ ժողովածուն անպատճառ պետք է պատկերազարդ լինի)՝ Բրյուսովը միաժամանակ նշում էր, որ դրանք ընդամենը «նախնական առաջարկներ են», որ աշխատանքի ընթացքում «ինչ-որ բան հարկ կլինի դուրս թողնել, շատ բան էլ, անկասկած, կավելացվի, որոշ բաներ կտեղափոխվեն և այլն»։ Դիմելով Մոսկվայի Հայկական կոմիտեին՝ Բրյուսովը, անշուշտ, հույս ուներ, որ աջակցություն կստանա և կկարողանա իրագործել իր նպատակը։ Ավա՞ղ, դա նրան չհաջողվեց. գրության ամսաթիվը՝ 1917 թ. փետրվարի 15-ը՝ շատ բան է բացատրում... Սակայն այժմ՝ համարյա մեկ դար անց, Բրյուսովի մտահղացումը կյանքի կոչվեց, իրագործվեց, և դա շատ կարևոր, ուշագրավ իրադարձություն է հայ-ռուսական մշակութային առնչությունների պատմության համար։

«Կազմողի կողմից» առաջաքանում Նաիրա Սեյրանյանը ներկայացրել է այն սկզբունքները, որոնցով նա առաջնորդվել է նոր անթուլոգիայի համար նյութեր ընտրելիս: Մի կողմից, նա աշխատում էր հավատարիմ մնալ բրյուսովյան մոտեցումներին: Մյուս կողմից, և դա միանգամայն բնական է, Ն.Սեյրանյանը հաշվի է առել բանաստեղծի այն տեսակետը, որ աշխատանքի ընթացքում շատ բան կարող է փոփոխությունների ենթարկվել: Եթե հիշենք, որ Բրյուսովը մտադիր էր ժողովածուն հրատարակել երկու տարում և այդ ընթացքում արդեն իսկ փոփոխություններ էր նախատեսում, ապա հասկանալի է, թե որքան փոփոխություններ հարկ եղավ կատարել կազմողին համարյա մեկ դար անց: Այնպես որ, Նաիրա Սեյրանյանի առջև շատ բարդ և պատասխանատու խնդիր էր դրված: Լուծելով այն՝ կազմողը խելամիտ և ստեղծագործական մոտեցում է դրսևորել: Այսպես, նա հրաժարվել է Բրյուսովի առաջարկած մի ամբողջ բաժնից, որի բովանդակությունը պետք է կազմեին 19-րդ դարի հայ արձակագիրների և բանաստեղծների գործերից վերցված այն դրվագները, որոնցում «նկարագրվում էր հայերի կյանքն ու կենցաղը» և արտացոլվում են «հայ հասարակության մեջ լայն տարածում ստացած տրամադրությունները»: Դժվար է չհամաձայնել կազմողի հետ, որ դա զգալիորեն կմեծացներ ժողովածուի առանց այն էլ բավական մեծ ծավալը:

Անթուլոգիայի մյուս բաժինները կազմված են ըստ Բրյուսովի մտահղացման, սակայն նրանց բովանդակությունը ամբողջովին չի համընկնում բանաստեղծի ծրագրերի հետ: Ժողովածուի բովանդակության մեջ կատարված փոփոխությունները, բնականաբար, պայմանավորված են նաև հրատարակության ժամանակով: Չէ՞ որ Բրյուսովի նախագծից անցած ավելի քան ինը տասնամյակի ընթացքում լույս են տեսել հայ պատմիչների, փիլիսոփաների երկերի նոր ռուսերեն թարգմանություններ: Եվ Ն.Սեյրանյանը հարկ է համարել անթուլոգիայի մեջ ընդգրկել որոշ հեղինակների, որոնք չեն հիշատակվել Բրյուսովի կողմից (Գրիգոր Տաթևացի, «Толкование притчей Соломоновых», Սիմեոն Լեհացի, «Путевые заметки»): Բացի այդ, անցած տարիների ընթացքում առանձին ստեղծագործություններ թարգմանվել են կրկնակի (Եզնիկ Կողբացու աշխատությունը), իսկ երբեմն՝ մույնիսկ եռակի (Եղիշեի աշխատությունը): Այս հանգամանքը կազմողի առջև ընտրություն կատարելու խնդիր է բարձրացրել: Նա նախապատվությունը տվել է ավելի ուշ հրատարակություններին: Այսպիսով, XIX դարում կատարված Կ.Պատկանովի, Ն.Էմինի, Խ.Հովհաննեսովի թարգմանությունների կողքին նոր անթուլոգիայում ընդգրկվել են նաև XX և XXI դարերում կատարված անվանի գիտնականների՝ Հ.Օրբելու, Ստ.Մալխասյանցի, Կ.Մելիք-Օհանջանյանի, Կ.Յուզբաշյանի, Ս.Արևշատյանի, Գ.Սարգսյանի, Շ.Սմբատյանի, Զ.Տեր-Դավթյանի, Մ.Դարբինյան-Մելիքյանի, Լ.Խանլարյանի և այլոց թարգմանությունները: Որոշ թարգ-

մանություններ հատուկ կատարվել են նոր հրատարակության համար: Այսպես, Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» գրքից դրվագները թարգմանել են Ա.Ավետյանն ու Ն.Սեյրանյանը:

Ուզում ենք հատկապես նշել ժողովածուի մեջ ընդգրկված այն թարգմանությունները, որոնք հրատարակվել են վերջին երկու տասնամյակների ընթացքում: Եվ ահա թե ինչու: Ինչպես հայտնի է, խորհրդային տարիներին գեղարվեստական թարգմանության խնդիրները պետական կարևորության գործ էին համարվում: Թարգմանչական գործունեությունը ամեն կերպ խրախուսվում էր, թարգմանական գրքերի հրատարակումը ոչ մի դժվարություն չէր ներկայացնում: Հայտնի է նաև, որ նույնը ոչ մի կերպ չենք կարող ասել դրանց հաջորդած տարիների մասին: Ուստի առավել ևս արժեքավոր է, որ հայ հին և միջնադարյան գրականության մի շարք ռուսերեն թարգմանություններ կատարվել են արդեն հետխորհրդային տարիներին: Դրանցից են, օրինակ, «Армянские жития и мученичества» (թարգմանությունը՝ Բ.Տեր-Դավթյանի, 1994), Գրիգոր Տաթևացու «Толкование притчей Соломоновых» (թարգմանությունը՝ Ա.Արևշատյանի, 1999), Թովմաս Արծրունու և Ամանունի «История дома Ариуни» (թարգմանությունը՝ Դարբինյան-Մելիքյանի, 2001), Ագաթանգեղոսի «История Армении» (թարգմանությունը՝ Բ.Տեր-Դավթյանի և Ա.Արևշատյանի, 2004), «История Тимурленга и его преемников» (թարգմանությունը՝ Բ.Տեր-Դավթյանի, 2005), Եզնիկ Կողբացու «Опровержение лжеучений» (թարգմանությունը՝ Ա.Արևշատյանի, 2008)... Բոլոր այս գրքերը, որոնք լույս էին տեսնում պարբերաբար, առանձնապես չէին սևեռում մեր ուշադրությունը այն հանգամանքի վրա, որ հայ հին և միջնադարյան գրականության նվիրյալները՝ գրականագետները, թարգմանիչները, շարունակում են իրենց անշահախնդիր գործը և մեր գրականության համար անբարենպաստ ժամանակներում: Իսկ ամենակարևորն այն է, որ նրանց աշխատանքը անուշադրության չի մատնվում և հրատարակվում է «Նաիրի» հայկական պետական հրատարակչության կողմից: Այդ ուրախալի փաստը ցայտուն ձևով ներկայացրեց նոր անթոլոգիան, որտեղ հավաքված են դրվագներ բոլոր նշված գրքերից:

««Армянская историческая проза и поэзия (V- XVIII в.в.)» անթոլոգիան առանձնանում է հարուստ գիտական ապարատով: Դա առաջին հերթին նախաբաններն են, որոնք հակիրճ տեղեկություններ են պարունակում գետնդրված հեղինակների և նրանց գործերի մասին: Ինչպես նշել է կազմողը, նա հիմնականում համառոտ կերպով ներկայացրել է տարբեր հեղինակների առաջաբանները: Ն.Սեյրանյանը օգտագործել է նաև հանրագիտարանային հոդվածներ: Որոշ դեպքերում կազմող ինքն է առաջաբաններ գրել: Այսպես, նա է ներկայացրել Գրիգոր Նարեկացուն և նրա «Մատյան ողբերգության»

պոեմը և XVIII դարի հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը լուսաբանող փաստաթղթերը: Առաջաբանները սեղմ, խտացված շարադրանքով ընթերցողին տեղեկություններ են տալիս այս կամ այն հեղինակի կյանքի և անթուղզիայի մեջ ներկայացված պատմական երկերին բնորոշ առանձնահատկությունների մասին: Հույժ կարևոր է, որ Ն.Սեյրանյանը մշտն է այդ աշխատությունների գրական արժանիքներն ու յուրահատկությունները, ինչպես նաև այն, թե որ լեզուներով են դրանք թարգմանվել, իսկ դա ինքնին վկայում է երկերի համաշխարհային արժեքի մասին, որը դուրս է գալիս ազգային սահմաններից: Յուրաքանչյուր տեքստ զուգորդվում է հանգամանալից ծանոթագրություններով (դրանք նույնպես հիմնականում վերցված են Ն.Սեյրանյանի կողմից օգտագործված հրատարակություններից): Անթուղզիան ամփոփում է Տերմինաբանական բառարանը: Այնպես որ, ռուս ընթերցողի համար անհասկանալի ոչինչ չի մնում:

Այժմ ժողովածուի մեջ ընդգրկված բուն նյութի մասին: Անտարակույս, այդ նյութը շատ հարուստ է և հետաքրքիր, և այստեղ չի կարելի թերագնահատել այն վիթխարի, մեծածավալ աշխատանքը, որը կատարել է կազմողը: Հիրավի, անթուղզիայի էջերում զետեղված ամենատարբեր ժանրերի ստեղծագործություններում՝ քաղաքական, իրավական բնույթի փաստաթղթերում, մամակներում, էպիկական, հոգևոր և ժողովրդական պոեզիայում, ծանապարհորդական նոթերում կենդանանում են հայոց պատմության դարերը: Եվ, այնուամենայնիվ, ժողովածուում գերակշռում են հայ պատմական արձակից վերցված դրվագները, ինչը իր առաջաբանում մշել է Ն.Սեյրանյանը: Պատմական իրադարձությունները և տարբեր դարերի փաստերը հաճախ նկարագրված են ականատեսների կողմից, և այդ հանգամանքը տեքստերին առանձնահատուկ հավաստիություն և մշանակալիություն է հաղորդում: Եվ քանի որ անթուղզիայի մեջ ընդգրկվել են V-XVIII դդ. հայ պատմագրության մոտիվներ, ընթերցողը հնարավորություն է ստանում ընդհանուր պատկերացում կազմել այդ երկերին բնորոշ գծերի մասին, որոնցից մեկն, անկասկած, հեղինակի վառ անհատականության դրսևորումն է: Այն ամեն անգամ ներխուժում է պատումի մեջ: Ընթերցողը կհամոզվի, որ V դարի հայ պատմագրության ավանդույթները ստեղծագործաբար յուրացվել և զարգացվել են հետագա ժամանակներում: Նույնիսկ ժողովածուում ներկայացված դրվագներից կարելի է համոզվել, որ տարբեր դարերի հայ պատմիչների աշխատությունները տոգորված են բարձր հայրենասիրական ոգով, որն, ի դեպ, արտահայտվում է ոչ թե հայության ու ամեն հայկականի փառաբանությամբ, այլ՝ իրադարձությունների և փաստերի սթափ գնահատականներով: Խոսքը վերաբերում է միասնության բացակայությանը, երկրում ներքին տարածայնություններին, դավաճանությանը և այլն: Եվ այս ամենի մասին հեղինակները գրում են խոր ցավով: Բոլոր

գործերում ընդգծվում են հայրենասիրության, քրիստոնեական կրոնի հանդեպ հավատարմության, հայրենիքի և հավատքի պահպանման համար անձնագրի պայքար մղելու գաղափարները: Եվս մի ընդհանուր գիծ. բոլոր մշակած տեղեմագործությունները պատմա-գեղարվեստական հուշարձաններ են, որոնց մեջ կարելի է բացահայտել հեղինակային ոճի անհատականությունը: Այդ երկերին բնորոշ են վառ համեմատություններ, մետաֆորներ, աֆորիզմներ, կենդանի պատկերավոր լեզու: Պատմական դեմքերը հաճախ հանդես են գալիս որպես գրական հերոսներ՝ բերվում են նրանց արտահայտությունները, երկխոսությունները... Այս ամենը առանձնահատուկ կենդանություն ու հուզականություն է հաղորդում պատումին, և այդ հատկանիշները կարելի է տեսնել հայ պատմական արձակի հուշարձաններում՝ Բուզանդից ու Եղիշեից մինչև Սեբեոս և Հովհաննես Դրասխանակերտցի, մինչև Կիրակոս Գանձակեցի և Առաքել Դավրիժեցի...

Բացի հայ պատմագրության նմուշներից, շատ հետաքրքիր և ծանաչողական են նաև անթղոգհայում գետեղված այլ նյութերը: Ուզում ենք հատկապես առանձնացնել Սիմեոն Լեհացու «Ճանապարհային նոթերը», որոնք գրվել են XVII դարում: Հեղինակը ոգևորված պատմում է աշխարհի տարբեր քաղաքների՝ Հռոմի, Վենետիկի, Ստամբուլի, Երուսաղեմի մասին, որտեղ ապրում էին հայերը, հայկական վանքերի ու եկեղեցիների, ինչպես նաև ուկրաինական Լվով քաղաքի հայկական գաղութի կյանքի մասին... Ուշագրավ են նաև ժողովածուի մեջ տեղ գտած XIII դարի («Договор между монгольским ханом Мангу и Киликийским армянским царем Гетумом I», Ռ.Ավագյանի թարգմանությամբ), ինչպես նաև XVII դարի վերջի և XVIII դարի հայ-ռուսական առնչություններին վերաբերող վավերագրերը: Լայն ընթերցողը հնարավորություն է ստանում ծանոթանալու զուտ պատմական բնույթ ունեցող վավերագրերին:

Անենք ևս մի քանի դիտարկում՝ կապված անթղոգհայում գետեղված նյութերի հետ: Առաջին հերթին մշենք այն դրվագները, որոնք, մեր կարծիքով, անպատճառ պետք է տեղ գտնեին ժողովածուի էջերում: Հասկանալի է, որ անհնար է ընդգրկել անընդգրկելին: Սակայն կան շատ կարևոր դրվագներ, որոնք բացահայտում են ոչ միայն հեղինակի, այլև ժողովրդական, ազգային աշխարհըմբռումը, և դրանք բացակայությունը նկատելի է: Հենց այդպիսի մի կարևոր պատառիկ է Մովսես Խորենացու գրքում Հայկի խոսքը՝ ուղղված իր զինակիցներին Բելի հետ մենամարտելուց առաջ. «Либо умрем и наши люди попадут в рабство к Белу, либо покажем на нем искусность перстов наших и, рассеяв полчище, добьемся победы»¹: Այս մի քանի բառերում ցայտուն ձևով արտահայտված է հայ ժողովրդի ազատասիրական

1 М.Хоренаци, «История Арменни», пер. Г.Саркисяна, Е., «Айастан», 1990, с. 20.

ոգին, նրա վճռական ձգտումը կյանքի և մահու պայքար մղելու, բայց թշնամուն չհնազանդվելու նրա վճռական ձգտումը: Եվ այդ բառերը աղերսվում են Ավարայրի ծակատամարտից առաջ ասված Վարդան Մամիկոնյանի կոչի հետ (այս դրվագը բերված է անթուղգիայում), ինչպես նաև հայ ժողովրդի «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի հիմնական մոտիվի հետ: Կարծում ենք, Հայկի նշված խոսքը չպետք է վրիպեր կազմողի ուշադրությունից: Մեր կարծիքով, անհրաժեշտ էր նաև ընդգրկել Վասակ Սյունիի դաժան մահվան մասին պատմող դրվագը եղիշեի գրքից, և ոչ միայն այն պատճառով, որ ինքը հեղինակը դրան մեծ նշանակություն էր տալիս, ավարտելով իր վառ պատկերավոր նկարագրությունը հետևյալ բառերով. «И тому, кто желал путем предательства стать царем страны Армянской, не нашлось в ней и места для могилы; ибо умер он, как пес, и выволокли его, как падаль. ...Написана сия памятная запись о нем ради обличительного посрамления грехов его. Всякий, кто услышит сие и познает, да бросит вослед ему проклятие и да не пожелает следовать примеру деяний его»¹. Այս դրվագը ուշագրավ է նաև իր գեղարվեստականությամբ, և նույնիսկ կարելի է հետևել նրա ազդեցությանը՝ պատկերների և համեմատությունների առումով՝ Դավթակ Բերթողի 7-րդ դարի աշխարհիկ բնույթի «Ողբք ի Մահն Ջևանշիրի Մեծի Իշխանի» ստեղծագործության վրա: Ուստիև ցանկալի կլիներ տեսնել այդ քաղվածքը անթուղգիայում, թեկուզ այն տողերի հաշվին, որտեղ պարզապես թվարկվում են այն նախարարների անունները, որոնք «по доброй воле ради любви Христовой отдали себя в оковы царские»²: Չէ՞ որ Վ.Բրյուսովը իր ծրագրերում մեծ նշանակություն էր տալիս ժողովածուում ընդգրկված քաղվածքների գեղարվեստական արժեքին, և Ն.Սեյրանյանը նույնպես, ինչպես ինքն է նշում առաջաբանում, փորձում էր հնարավորինս մեծ ուշադրություն դարձնել հատկապես այն նյութին, որը հետաքրքիր է գեղարվեստական առումով³:

Մի քանի խոսք Դավթակ Բերթողի «Ողբի» մասին: Այն տեղադրված է անթուղգիայի երկրորդ բաժնում, որն ընդգրկում է Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանի գրականությունը՝ IX-XI դարերը: Այդ բաժնում տեղ են գտել քաղվածքներ Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից Աշխարհի» գրքից, որոնց թվում է հայտնվել նաև Դավթակի «Ողբը»: Կաղանկատվացին ընդգրկել է այդ ստեղծագործությունը իր աշխատության մեջ, պատմելով աղվանաց իշխան Ջևանշիրի սպանության մասին: Սակայն Ջևանշիրը սպանվել է 670 թ., և «Ողբը» գրվել է հենց այդ նույն ժամանակահատվածում: Այսինքն՝ դա VII դարի ստեղծագործություն է, և արդեն լույս է

1 Егише. О Вардане и войне армянской. Перевод И.Орбели. Ер., 1971, с. 126.

2 Նույն տեղում, էջ 56:

3 Армянская историческая проза и поэзия (V- XVIII в.в.), с. 9.

տեսել առանձին գրքով՝ ինչպես բնագրով, այնպես էլ տարբեր լեզուներով կատարված թարգմանություններով (այդ հրատարակությունը, որն իրագործել է 1986 թ. Լ.Սկրտչյանը, նշված է անթուղգիայի մատենագրության մեջ): Ուստիև ավելի ճիշտ կլիներ տեղադրել «Ողբը» ժողովածուի առաջին բաժնում՝ համապատասխան ծանոթագրություններով: Բացի այդ, «Ողբի» բուն տեքստը տողացի ռուսերեն թարգմանությամբ, որը վերցված է Մովսես Կաղանկատվացու աշխատության ռուսերեն հրատարակությունից, այնքան էլ հաշտովված չէ, այնտեղ հանդիպում են արհեստական, ռուսերեն վատ հնչող տողեր, օրինակ Ջևանշիրին սպանողի մասին.

*То злое рождение, что совершил ему,
Сын беззакония, истязавший его,
Окутанный проклятием да поидет он по свету!
Блуждать и скитаться ему как Каину!*

*Преграждены да будут тропы его бегства,
Хищные птицы да кружат над его головой...¹*

Առաջին տողն այստեղ ընդհանրապես անհասկանալի է, ռուսերեն այդպես չեն ասում: Հիշենք այս առումով, թե ինչպիսի նշանակություն էր տալիս Վ.Բրյուսովը ապագա ժողովածուի թարգմանությունների որակին: Եվ եթե Լ.Սկրտչյանը չցանկացավ տեղադրել անթուղգիայում «Ողբի» Լ.Գրեբնևի գեղարվեստական թարգմանությունը (իննց Գրեբնևի թարգմանությամբ են գրքում ներկայացված Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» հատվածները), ապա կարելի էր ընտրել Լ.Սկրտչյանի անհամեմատ ավելի հաշտ տողացի բանասիրական թարգմանությունը, որը հրապարակվել է նշված 1986 թ. հրատարակության մեջ:

Կազմողի ևս մեկ որոշում մեզ այնքան էլ համոզիչ չի թվում: Վ.Բրյուսովը, առաջարկելով տեղադրել ժողովածուի մեջ հոգևոր բանաստեղծություններ՝ շարականներ, ժամանակագրական կարգով բաշխում էր դրանք երեք բաժիններում: Մինչդեռ անթուղգիայում բոլոր շարականները տեղադրված են երրորդ բաժնում, ինչի արդյունքում V դարի հեղինակների՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Մովսես Խորենացու հոգևոր երգերը հայտնվել են «XI-XIV դարերի Կիլիկիայի հայկական պետության շրջանի գրականություն» բաժնում:

Իհարկե, լավ է, որ ազգային, հայրենասիրական թեմատիկան արտացոլող շարականները տեղ են գտել ժողովածուում, սակայն, կարծում ենք, չարժեք այնտեղ միևնույն թեմայով՝ Վարդան Մամիկոնյանին և նրա զինակիցներին

1 Նույն տեղում, էջ 162:

նվիրված երկու տեքստ ընդգրկել, թեկուզ և տարբեր հեղինակներին պատկանող (էջ 206-207):

Եվս մի նկատառում. հաշվի առնելով, որ անթուղզիան ակադեմիական, գիտական հրատարակություն չէ, այլ, ըստ Բրյուսովի մտահղացման, ուղղված է ընթերցողների ամենալայն շրջաններին, կարելի էր նրանում չընդգրկել այնպիսի հատվածներ, որոնց մեջ գրեթե յուրաքանչյուր տող մեկնաբանություններ և ծանոթագրություններ է պահանջում (օրինակ, էջ 272-ը, որտեղ տեքստի 14 տողերի համար 17 ծանոթագրություն է պահանջվել): Նման տեքստերը դժվար են ընկալվում և զուրկ են այն գեղարվեստականությունից, որի մասին խոսում էր Բրյուսովը, համարելով այն նյութն ընտրելու ամենակարևոր պայմաններից մեկը:

Ավարտելով իր առաջաբանը՝ Ն.Սեյրանյանը գրում է. «Հանձնելով գիրքը ընթերցողին, մենք հույս ենք փայփայում, որ կարողացել ենք այնպես ընտրել և տեղադրել նյութը, որպեսզի համեմատաբար փոքրածավալ անթուղզիայում ընթերցողը կարողանա ծանոթանալ հայ պատմական արձակի և պոեզիայի լավագույն նմուշների հետ և որպեսզի գրքի ընթերցումը նրա համար դառնա հետաքրքիր և հրապուրիչ, ցանկություն արթնացնի ավելի խորը թափանցել Հայաստանի պատմության, նրա գրականության և մշակույթի մեջ...»¹:

Այսօր, երբ գիրքը արդեն հասել է ընթերցողին, կարելի է արձանագրել, որ կազմողի առջև ծառացած խնդիրը լուծված է: «Армянская историческая проза и поэзия (V-XVIII в.в.)» ժողովածուն վերջին տարիների հայ-ռուսական մշակութային առնչությունների բնագավառում ամենաարժեքավոր հրատարակություններից է, այն հնարավորություն է ընձեռել արդեն XXI դարի ընթերցողների լայն շրջաններին համակվելու հին և միջնադարյան Հայաստանի պատմական և մշակութային կյանքի ոգով: Նշենք, որ դրան են նպաստել նաև գրքում զետեղված հրաշալի պատկերազարդ նյութերը, որոնք վառ պատկերացում են տալիս հայ ծարտարապետության, մանրանկարներով զարդարված հայ հին և միջնադարյան ձեռագրերի, խաչքարերի մասին...

Համարձակորեն իրագործելով Վալերի Բրյուսովի մտահղացումը, Նաիրա Սեյրանյանը, Սուրեն Զոլյանը և բոլոր նրանք, ում ջանքերով անթուղզիան լույս է ընծայվել, ևս մեկ անգամ հարություն տվեցին և մոտեցրին մեզ հայ ժողովրդի այդ մեծ բարեկամի անունը:

1 Նույն տեղում, էջ 10: